«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում.

Դաստիարակ՝ Հասմիկ Պապոյան

Մանկապարտեզ՝ ՀՀ Շիրակի մարզ «Արձագանք-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն……3

ԳԼՈՒԽ 1 ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

1.1 Ազգային տոներ……4

1.2 Ազգային ծեսերի իրականացումը մանկապարտեզում……6

ԳԼՈՒԽ 2 ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

2.1 Ծեսերի իրականացման քայլերի ուսումնասիրություն……9

2.2 Պարապմունքի կազմակերպում նվիրված Սուրբ Զատկի տոնին……12

Եզրակացություն……17

Օգտագործված գրականության ցանկ……18

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Մշակույթը չէր պահպանվի, եթե գոյություն չունենային սերնդեսերունդ նրա փոխանցման միջոցները: Պատմության ընթացքում կազմավորվել են մի քանի այդպիսի միջոցներ կամ ձևեր: Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ազգայի տոները և ծեսերը: Ազգային մշակույթի յուրացման, փոխանցման, տարածման ճանապարհին դասավանդողը իր առջև պետք է դնի կոնկրետ նպատակներ և խնդիրներ, որոնք պետք է բխեն կրթության շահերից և ունենան սովորողի զարգացմանը նպաստող քայլեր:

Ազգային տոների և ծեսերի կազմակերպումը կրթական գործընթացում լուծում է մի շարք խնդիրներ, նպաստելով երեխաների զարգացմանը:

Ազգային ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը, ազգի մշակույթը յուրացրած, ինքնադրսևորվելու, ստեղծագործելու, որոնելու, հայտնաբերելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն: Ամեն տարիք իր չափով է ներառվում այդ գործընթացին, և միասին ստեղծում, իրականացնում են իրենց ծեսը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունների ուսումնասիրության անհրաժեշտությամբ, որը ներկայումս ավելի արդիական է, քանի որ բոլոր մանկապարտեզներում յուրովի են նշվում ազգային տոներն և ծեսերը, ինչով էլ պայմանավորված դրանք դառնում են ավելի երիտասարդ և իրականացվում են ժամանակին համքայլ:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում:

Աշխատանքն իրականացնելու համար ներկայացվող խնդիրներն են՝

1.Ուսումնասիրել ազգային տոները և ծեսերը:

2.Ներկայացնել ազգային ծեսերի իրականացումը մանկապարտեզում

3.Իրականացնել հետազոտություն մանկապարտեզում ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկություններով պայմանավորված:

ԳԼՈՒԽ 1

ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

1.1 Ազգային տոներ

3-6 տարեկան երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքի ծրագրում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում գրավիչ ժամանցը, զանազան մարզական զվարճություններն ու տոնահանդեսները: Աշխարհի ժողովուրդների նկատմամբ դրական վերաբերմունքի, բազմամշակութային դաստիարակության հիմքերը դրվում են ազգայինի մեջ համամարդկայինը ընդգծելու միջոցով: Երեխայի բարոյագեղագիտական դաստիարակությունը պետք է իրականացվի համընդհանուր, համամարդկային արժեքների հետ շփման միջոցով: Դրանք բացահայտվում են ազգային մշակույթին՝ գրականությանը, արվեստին, ճարտարապետությանը, քանդակագործությանը, ազգային ավանդույթներին, հերոսական պատմությանը, պարերին, երգերին, առածներին, ասացվածքներին երեխայի ծանոթացման ընթացքում: Արվեստի աշխարհն իր բազմազանությամբ և հարստությամբ պետք է կապվի երեխայի կյանքին:

3-6 տարեկան երեխաների բարոյական դաստիարակությունը հիմնականում իրականացվում է առօրյա կյանքում: Երեխայի ամենօրյա զբաղմունքը և նրա գործունեության ձևերը հնարավորություն են տալիս դրսևորել անմիջական վերաբերմունք նրան շրջապատող իրականության նկատմամբ, օգնում են դաստիարակել բարոյականային հատկանիշներ: Մանկավարժության բազմաթիվ հարցադրումների շարքում առանձնանում է, երեխաների որոշակի տարիքային խմբի համար կազմակերպվող միջոցառումների հարցը: Եթե առաջնորդվենք այն սկզբունքով, որ կրթության մեջ կարևոր խնդիրներից մեկը երեխայի անհատականությունը պահպանելն ու նրա ճաշակը զարգացնելն է:[1]

Այստեղ մեծ դեր և նշանակություն ունեն ազգային տոների և ծեսերի կազմակերպումը:

[1] 3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մոդելներով, դաստիարակի ուղեցույց, Երևան 2018, էջ 106:

Ազգային տոներն ընդհանուր ցեղային տոների մասնավոր արտահայտություններն են: Դրանք ազգային կյանքի կարեւորագույն բաղադրիչներից են: Դրանցում արտահայտվում է ազգի ծագումը, հոգետիպը, հավատքը, պատմությունը, մշակույթը… Ազգային տոնը ազգի բոլոր սերունդների համար է, այն ազգի ներքին որակական հատկությունների դրսեւորումն է: Ազգի կյանքի հաստատուն ընթացքը, նրա հոգեւոր հարստությունը մեծապես կախված է նրա տոների հարստությունից ու բազմազանությունից: Ազգը մոռացա՞վ իր տոները, մեծապես կնպաստի իր չքացումին: Ազգը եթե ազգ է, տոնը ոչ փոխառնում է եւ ոչ էլ արտահանում, այլ սրբորեն պահում է իրենը՝ ազգայինը: Ժողովուրդն է ուրիշից տոն փոխառնում, կամ էլ ուրիշին իրենը պարտադրում:

Հայկական ավանդական տոնացույցը իրենից ներկայացնում է ազգային տոների տարեկան շրջապտույտը: Ինչպես բոլոր ազգերի, այնպես էլ հայկական տոնացույցն իր մեջ պարունակում է բոլոր տոներն ու ծեսերը:

Հիշենք, որ հայերը դարերով պետականություն չեն ունեցել և համայնքներով ապրել են այլ ազգերի լծի տակ: Փաստորեն, այս տոնացույցը կոչված է կարգավորելու և անաղարտ պահելու յուրաքանչյուր սերնդի դարեդար փոխանցվող ավանդներն ու ազգային արժեքները, ներգրավել նրան համայնքի կյանքի, փոխանցվող ավանդույթների մեջ և ազգային ինքնատիպ սովորույթների իրազեկը դարձնել: Այդ ավանդական տոների մեջ կարելի է գտնել հայ ժողովրդական իմաստնության ոսկե հատիկները, որոնք խորին հարգանք և ակնածանք են առաջացնում ազգի նկատմամբ: Ժողովուրդը, որի պատմությունը գալիս է դարերի խորքից, իր ուսերին ավել բեռ չի բերում, այլ վերցնում է միայն ամենաարժեքավորն ու պիտանին: Բնորոշ է և հետաքրքիր, որ այդ տոների և ազգային խաղերի հիմնական մասնակիցները երիտասարդ սերունդն է, ինչը նրանց հնարավորություն է տվել ճանաչել միմյանց, դուրս գալ «մարդամեջ», շփվել և սիրահարվել:

Տոների ձևավորումը և զարգացումը, որպես օրինաչափություն, պայմանավորված է սոցիալական, տնտեսական, պատմական, քաղաքական, էթնոմշակութային և կրոնական գործընթացների փոխազդեցություններով:

Արտացոլելով հասարակության մեջ իրականացվող այդ գործընթացները, տոները կատարում են էթնիկ ավանդույթների պահպանման և դրանք սերունդներին փոխանցելու կարևորագույն գործառույթներ: Տոները կատարում են նաև էթնիկ ավանդույթների կողմնորոշման, հասարակական հարաբերությունների կարգավորման և անհատի պահանջների բավարարման գործառույթներ: Այդ իսկ պատճառով տոնական համակարգի ձևավորման և փոփոխման գործընթացների ու մեխանիզմների, ինչպես նաև հասարակական ու ընտանեկան կյանքում դրանց գործառութային նշանակության բացահայտումը ոչ միայն տեսական, այլև կիրառական առումով կարևոր և հրատապ հիմնախնդիր է: [2]

Մենք՝հայերս, մեր հարուստ մշակութային անցյալում, նաև հարուստ տոնացույց ունենք: Մեր տոների ժողովրդական կատարումների զգալի մասը վկայում է, որ ժողովուրդը ծեսերին ի ցույց է դրել մարդու և բնության ամբողջականությունը, փոխկապակցվածությունը, միասնականությունը և տարբեր ձևերով միմյանց օգնելու ներդաշնակ կապը: Տոնի, ծեսի հանդիսության անքակտելի մաս են կազմում նաև խաղերը:

1.2 Ազգային ծեսերի իրականացումը մանկապարտեզում

Մանկապարտեզներում իրականացվող ծրագրի հիմքում հայկական տոներն ու ծեսերն են: Ծիսական տոնացույցը մանկան գործունեության ամբողջական, հետաքրքիր և արդյունավետ կազմակերպման ձև է: Այս միջոցով մանկան տոնը վերածվում է ստեղծագործական գործընթացի, որն ավարտվում է իսկական տոնակատարությամբ, դառնում հաշվետվություն:

Տոնի կամ ծեսի ակտիվ մասնակիցը ոչ միայն մեծերն են՝ դաստիարակը, ծնողը, տատիկն ու պապիկը, այլ երեխան ինքն էլ իրական տոնի ակտիվ մասնակիցն է, և ոչ թե միջոցը: Տոնն էլ բոլորի համար է. հանդիսատեսներ, պասիվ դիտողներ, հյուրեր չկան: Մեծերի հետ ամբողջական ծեսին մասնակցելով, յուրացնելով ծեսի նյութը, երեխան դառնում է այդ նյութի կրողն ու զարգացնողը:

[2] Միտոյան Հ., Մարության Ս., Սմբատյան Լ. և ուրիշներ, Մանկապարտեզի կրտսեր առաջին խմբի կրթական համալիր ծրագիր, Երևան, 2012թ., էջ 11:

Հետագայում նա հեշտությամբ կյուրացնի և՛ իր ժողովրդի, և՛ համաշխարհային գրականությունը, արվեստն ու պատմությունը: Այդ նյութը կնպաստի գիտակցաբար գնահատելու ճշմարիտ արժեքները:

Ծեսի իրականացումը, որն իր մեջ ներառում է երգ-պար, բանահյուսություն, գրականություն, կերպարվեստ-ձեռարվեստ, թատրոն, խաղ և այլն, իրական, ամբողջական կրթության իրագործում է:[3]

Մանկապարտեզում երաժշտությունը, երգն ու պարը անաղարտ հիմքերի վրա են: Ծիսական երգ- երաժշտությունն ամենուր է ու անընդհատ: Առավոտյան մարզվելիս, ճաշելիս, խաղալիս, բակում ու քնելիս: Մինչև ծեսը երեխաներն այնքան են լսում այդ երգերը, որ այն հատուկ սովորեցնելու կարիք գրեթե չի լինում:

Ծեսը խաղարկվում է ոչ թե մեկ տարիքային խմբում, այլ տարատարիք սովորողների, դասավանդողների, դասվարների, սաների, դաստիարակների, ծնողների հետ միասին: Մեծերը ստեղծում են ծիսական միջավայր՝ ծիսական պարագաներով, ծիսական կերպարներով, ծիսական գործողություններով, ծիսական կերակրատեսակներով, տարվա եղանակին բնորոշ մրգերով: Այդ միջավայրում մանուկն ունի իր տեղն ու դերը, որտեղ խաղարկում է ծիսական գործողություններ, խաղում ինչպես ծիսական, այնպես էլ՝ մանկական խաղեր, որտեղ օգտագործվում են տվյալ ծեսին բնորոշ պարագաներ, ինչպես, օրինակ. Ամանորին՝ ընկույզ, Զատիկին՝ ձու, Համբարձմանը՝ ծաղիկ, և այլն: Այսինքն, մանկանը ծեսի մեջ ներառելու լավագույն արդյունավետ միջոցը խաղն է: Ամեն տարիք իր չափով է ներառվում այդ գործընթացին, խաղում իր տարիքին բնորոշ հմտությամբ: Զարգանում է իրավիճակն ըմբռնելու կարողությունը, մտքի ճկունությունը, երևակայությունը, հիշողությունը, ուշադրությունը, կամքը, մկանների լարումը, ինքնուրույն աշխատելու, վերլուծելու, համադրելու, շոշափելու, ուսումնասիրելու, իր դիտողությունները հաղորդելու կարողությունը, երևույթների մեջ կապ գտնելու, ճիշտ կողմնորոշվելու, շարժումներին տիրապետելու կարողությունը, հարստացնում է բառապաշարը և այլն: Ազգային ծեսերի խաղարկման մեջ մանուկը հիմնականում կարող է ընդգրկվել իր տարիքին

[3] https://marinemkrtchyan.wordpress.com/

համապատասխան ծիսական գործողություններ կատարելով, ծիսական և մանկական խաղեր խաղալով: Ծեսն ամբողջությամբ իմանալու, ըմբռնելու և իրենը դարձնելու համար, հարկավոր է անպայման մասնակից լինել, ներառվել նախապատրաստման գործընթացին, ծիսական միջավայրի ստեղծմանը, միասին պատրաստել ծիսական պարագաներ, ծիսական կերակուրներ, սովորել ծիսական ազգային երգեր, պարեր, ծեսի խաղարկման ընթացքում իմանալ իր դերը, գործողությունների այն բաժինը, որն իրենն է:

Սաները, ազգային ծեսը խաղարկելիս, ծանոթանում են ազգային խաղերին, սովորում նոր խաղեր և նպաստում դրանց տարածմանը, զարգանում է իրավիճակն ըմբռնելու կարողությունը, մտքի ճկունությունը, երևակայությունը, հիշողությունը, ուշադրությունը, կամքը, մկանների լարումը և այլն:

Ազգային ծեսերի խաղարկման մեջ սաները հիմնականում կարող են ընդգրկվել իրենց տարիքին համապատասխան ծիսական գործողություններ կատարելով, ծիսական և մանկական խաղեր խաղալով: Բնականաբար, ծեսը խաղարկվում է ոչ թե միայն սաների, այլ դաստիարակների, ծնողների, իսկ դպրոց պարտեզներում՝ սովորողների հետ միասին:

Ծիսական խաղերը, բացի հետաքրքիր ու տպավորիչ լինելուց, զարգացնում են մանր և խոշոր մկանային մոտորիկան, ընդհանուր շարժումային համակարգը, դրանք թատրոնի նման սինթետիկ արվեստ են դառնում, որոնք ինտեգրում են ինչպես երեխայի զագացման բոլոր ոլորտները, այնպես էլ գոծունեության տարբեր ձևերը: Աշխատանքի ընթացքում օգտագործված հիմնական մեթոդներից են. իրավիճակների խաղարկում, դերախաղ, խմբային աշխատանք: Սաների հետ աշխատանքի ընթացքում հանդիպում ենք հարցի լուծման այնպիսի տարբերակի, որը չի մտնում մեծի տրամաբանության ու երևակայության սահմանների մեջ: Ազգային ծեսերի խաղարկման մեջ մանուկը հիմնականում կարող է ընդգրկվել իր տարիքին համապատասխան ծիսական գործողություններ կատարելով, ծիսական և մանկական խաղեր խաղալով: Ծեսն ամբողջությամբ իմանալու, ըմբռնելու և իրենը դարձնելու համար, հարկավոր է անպայման մասնակից լինել,

ներառվել նախապատրաստման գործընթացին: Տոների ընտրության հարցում ուղղորդվում ենք ըստ կրթօջախի տոնացույցից:

ԳԼՈՒԽ 2 ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

2.1 Ծեսերի իրականացման քայլերի ուսումնասիրություն

Մանկապարտեզում ծիսական գործունեությունը որոշակի փուլեր է ենթադրում՝

- ծեսի նախապատրաստում
- ծիսակատարություն:

Ծեսերը բեմականացումներ չեն և երեխաները իրենք են ստեղծում վերաիմաստավորում, խաղում, երգում այդ տոները:

Ազգային ծեսերի վերականգնումը և հանրակրթության մաս դարձնելը ունի մի շարք դրական կողմեր՝

- Սովորողը ծանոթանում է ազգային տոներին, անցկացման կարգին, ծիսական առօրյային
- Սովորում է ծիսական երգերը, խաղերը, խաղերգերն ու ասիկները
- Սովորողը երգի միջոցով հաղթահարում է բարբառային դժվարությունները
- Տեխնոլոգիա դասընթացի շրջանակներում վերականգնում են ծիսական միջավայրը
- Ծիսակարգը ուսումնասիրելիս ծանոթանում տարածաշրջանային առանձնահատկություններին
- Արդյունքում վերականգվում է տոնը իր ամբողջ ծիսակարգով

Ազգային ծեսերի համագործակցային իրականացվման արդյունքում տեղի է ունենում՝

- ծեսի հանրահռչակում
- գիտելիքի և փորձի փոխանակում
- ծեսի տարածաշրջանային առանձնահատկությունների յուրացում

- սովորողը դառնում է բանահավաք
- ծեսը դառնում է համատեղ ձեռքբերում:[4]

Երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ավանդույթների, ծեսերի, տոների տեսքով նաև: Բնականոն կյանքով ապրելու պայմաններում ժողովրդական տոները չէին իմաստազրկվի, այլ նոր որակ, նոր ձև կստանային և կշարունակեին կատարել իրենց կարևորագույն դերը՝ մարդկանց համախմբելու, ազգային և մարդկային արժեքները պահպանելու կարևորագույն գործառույթով: Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը: Եթե ընտանիքում չի պահպանվում ավանդականը, ապա այդ գործն իր վրա է վերցնում պետությունը կամ կրթօջախը՝ սկսելով մանկապարտեզից և շարունակելով մինչև դպրոցն ավարտելը: Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Լավ իմանալ երգերն ու պարերը, ծիսական գործողությունները, պարագաները, դրանց խորհուրդն ու պատրաստման տեխնոլոգիան:

Ծեսի իրականացումը մանկապարտեզում հենց ծես է՝ ուսումնական «արարողակարգ»: Սա սովորական ուսուցում չէ, սա միասին ապրել է, միասին ապրելու կրթություն ստանալ է՝ խաղով, երգ ու պարով, ավանդական և ոչ ավանդական տարրերով հագեցած:

Դաստիարակը, ծնողը այն մարդիկ չեն, որ ինչ-որ բան են սովորեցնում կամ թելադրում, այլ մարդիկ են, որոնք ոգեշնչում են, որ սանը, սովորողը ինքնուրույն բացահայտի, հայտնագործի ու ապրի իմացումի՝ իրեն հատուկ, յուրովի հրճվանքը: Ծեսի իրականացումն անարդյունավետ ու ինքնանպատակ կլինի, եթե այն չլինի կյանքով ուսուցում, որտեղ սանն ինքն է խաղում, բացահայտում, և այս ամենն անընդհատ է, սանի համար հայտնագործությունների անվերջ շղթա, որով ապրում է իմացումի անծայրածիր հրճվանքը:

Ծեսի մասնակիցներն ինչպես նախապատրաստական, այնպես էլ իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները,

[4] https://tevanyanseda.home.blog/

գիտելիքները:

Սանը, քայլ առ քայլ ազատ միջավայրում իր առօրյա գործունեությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, ակամայից յուրացնում է ծեսը: Բաց, թափանցիկ, ազատ միջավայրում, առանց անգիրի, առանց հատուկ մշակված, դերային բաժանում արած տեքստի՝ նրանք խաղարկում են ծիսական գործողությունները՝ երգելով, պարելով, թռնոցիներով, բակային և ազգային խաղիկներով, ուտեստներով, թավալվելով, ալրոտվելով և այս ամենը տեղափոխում տուն՝անմիջական մասնակիցը դարձնելով ծնողին: Մանկապարտեզում սանի համար ազգային-ավանդական ծեսի ճանաչման ամենաարդյունավետ ձևը խաղն է, այդպես ավելի տպավորիչ ու հասանելի է, հասկանալի, գործնական:

Նախքան ծեսի նախապատրաստությունը, դաստիարակների լաբորատորիան երաժիշտների, տեխնոլոգների հետ քննարկում է կազմակերպում, հավաքում տեղեկատվություն տվյալ ծեսի մասին, և կազմում են **աշխատանքային նախագիծ,**: Սեմինարների ժամանակ յուրացնում են ծեսը և իրագործում խմբերում: «Ծիսական» սեմինարներին մասնակցում են նաև ծնողները, որոնք ցանկանում են յուրացնել և տիրապետել ազգային ծեսերը:

Կարևոր աշխատանք է ծեսի մասին տեղեկատվության հավաքումը: Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Իհարկե, ծեսին նոր կյանք տալ չի նշանակում ակունքից բոլորովին հեռանալ, հնարավոր է հնի վրա կառուցել նորը: Այդ ժամանակ նաև բանահավաքչությամբ ենք զբաղվում. ծնողներից, տատիկ-պապիկներից ձայնագրում կամ գրառումներ ենք կատարում, հետաքրքիր սովորույթները, ավանդույթներն ուսումնասիրում, քննարկում ենք մասնագետների հետ և ներառում նախագծերի մեջ: Դրանք կարող են լինել մեզ դեռևս անծանոթ օրհնանքներ, խաղիկներ, հաշվերգեր, ասույթներ, ուտեստներ, հետաքրքիր ավանդույթներ, ինչպես նաև արդեն հայտնի ժողովրդական ստեղծագործությունների տարբերակներ, որոնք մշակում ենք և կիրառում: Դաստիարակը ոչ միայն հետազոտական, ստեղծական աշխատանք է կատարում,

այլև դառնում է իր գործունեության նախագծողը, իրականացնողը և տարածողը: Նախագծի նպատակն է ծեսը դարձնել երեխայինը, և որ նա լինի ոչ միայն մասնակիցը, այլև փոխանցողը ու տարածողը:[5]

2.2 Պարապմունքի կազմակերպում նվիրված Սուրբ Զատկի տոնին

Այժմ կներկայացնե Զատկի տոնին նվիրված պարապմունքի պլանավորման օրինակ: Ամեն տարի մեր մանկապարտեզում մենք յուրովի տոնում ենք ազգային տոները: Այս տարին էլ բացառություն չէր: Մենք պլանավորել և անցկացրել ենք պարապմունք հետևյալ պլանով: Այս տոնի խորհուրդը երեխաների համար պետք է լինի լիովին հասկանալի և նույնքան էլ հետաքրքիր: Դա իրականացնելու համար պետք է երեխաներին ինտեգրել այդ տոնին նվիրված նախապատրաստական աշխատանքների կազմակերպմանը: Զատկի տոնից երկու շաբաթ առաջ, երեխաների հետ նախապատրաստում ենք ցորենը, որպեսզի մինչև տոնի օրը այն ծլի:

Պարապմունք	Խումբ	Թեմա	Տևողություն
	Միջին խումբ	<<Սուրբ Զատիկ>> տոնը	2 պարապմունք
Նպատակը	• կամրապնդեն և կխորացնեն գիտելիքները ազգային տոների վերաբերյալ, • կձևավորվի վերաբերմունք աշխարհի, մարդկանց շրջապատի և գեղեցկության նկատմամբ, • կզարգանա ուշադրությունը, հիշողությունը, մտածողությունը, • ճշգրտել տպավորությունները զատկի տոնի, աշխարհի		

[5]https://naxakrtaran1.wordpress.com/

	նորացման և բնության զարթոնքի վերաբերյալ: • կդաստիարակենք սեր հայրենիքի, ազգային մշակույթի հանդեպ: • Բառապաշարը կհարստանա հալվա, ածիկ, օրհնանք, պաս ավանդույթ բառերով
Նյութեր	Ծլեցրած ցորեն, գաթա, հալվա, չամչով փլավ, ածիկ, փոխինդ, գունավոր ներկեր, ձու
Մեթոդներ	Մտագրոհ, ԳՈՒՍ
	Ընթացքը
Խթանման փուլ	Երեխաներին նստեցնել կիսաշրջանաձև, մեջտեղում դնել սեղան, որի վրա նախօրոք դասավորել Զատկի տոնի խորհրդանշները: Պարապմունքը սկսել աղոթքով: Այնուհետև ուղել հարցեր. -Երեխաներ, եկեք թվենք թե ինչ ազգային տոներ գիտենք: -Երեխաներ, եկեք բոլորով միասին գուշակենք, թե ինչ տոն ենք այսօր մենք նշելու: Երեխաները պատասխանում են Սուրբ Զատիկ: Դաստիարակը ընթերցում է՝ Մեծ Զատիկ է, սուրբ զատիկը, Եկեք նշենք այս սուրբ տոնը Երբ Հիսուսը նորից ծնվեց Եվ իր օրհնանքը մեզ տվեց: ԳՈՒՍ մեթոդի կիրառմամբ հարցերով, հասկանալ, թե ինչ գիտեն երեխաները տոնի մասին:
Իմաստի	Զատիկը եղել է նախաքրիստոնեական շրջանի տոներից

ընկալման փուլ	մեկը, որը խորհրդանշել է աշխարհի նորացումն ու բնության զարթոնքը: Զատիկ բառը կապվում է տիեզերիք հետ ևնշանակում է զատվել, բաժանվել չարից, մեղքերից: Քրիստոնեության շրջանում, այն նոր բովանդակություն է ստացել: Քրիստոսի մահը և հարությունը զուգորդվել է սերմը հողի մեջ թաղելու/մահ/ և նրա ծլարձակման/հարություն/ հետ: Արտասանել՝ Հողմը փչեց հարավեն, Դաշտն ազատվեց ձյուներեն, Բերկրություն է ամեն տնոց, Քրիստոս Հարյավ ի մեռելոց: Տեսահոլովակի դիտում . /https://www.youtube.com/watch?v=kIlM8DrYeYM Հետո արտասանում ենք՝ Մեր պապերն ու մեր տատերը Պաս են պահել ձու ներկել Օրհնել են մեծ Զատիկը սրբազան Պահպանել են ավանդույթը հայկական: Պատմել Զատկի ծեսի գլխավոր խորհրդանիշ՝ ձվի մասին: Ձուն առանձնահատուկ տեղ է գրավել պտղաբերության հնագույն ծեսերում: Այն համարել են աշխարհի օրինակ. Դրսի կեղևը՝ երկինք, սպիտակ թաղանթը՝ օդ, սպիտակուցը՝ ջուր, իսկ դեղնուցը՝ երկիր: Ձուն համարել են նաև հարության խորհրդանիշ, որը փայփայելով նոր կյանքի սերմը, երկու ծնունդ է ունենում: Երեխաները արվեստի կենտրոնում ձուն

	նախշազարդեցին ձվի սպիտակուցով և պատկերազարդ անձեռոցիկներով: Ձու ներկելը կարևոր ավանդույթ է Հրաշափառ հարության տոնին: Երեխաների հետ միասին ներկել ձվեր և խաղալ **Ձվարշավ կամ Ձուգլդորիկ խաղը:** Ձվերը միաժամանակ և նույն տեղից գլորելու նպատակով վերցնել մոտ մեկ մետր երկարության փայտ, որը որպես պատնեշ դրվում ե թեք տեղանքի վերևում: Մասնակիցները իրենց ձվերը կողք-կողքի շարում են փայտ-պատնեշի ետևում: Փայտը հեռացնելուն պես ձվերը բարձունքից վար են գլորվում՝ թողնելով ձվարշավի տպավորություն: Մաքրել ձուն և ուսումնասիրել ձվի կառուցվածքը: Երգել <<Տարվա մեջ ուրախալի>> երգը և հարցերով ամփոփել:
Ֆիզկուլտ դադար	https://www.youtube.com/watch?v=Nr_VMN5RfOE Երաժշտության ներքո վարժությունների կատարում:
Կշռադատման փուլ	ԳՈՒՍ մեթոդի՝ Սովորեցի, բաժնի լրացման համար տալ հարցեր սաներին, պարզելու համար ինչ սովորեցին: Պարապմունքի ավարտին ծեփամածիկով ծեփել ձվեր և ցուցադրել միմյանց:

Սանը պետք է երգի ազգային երգ, ունկնդրի ազգային երաժշտություն, խաղա ազգային, ծիսական խաղեր: Սանի համար ազգային ծեսի ճանաչման ամենաարդյունավետ ձևը խաղն է, այդպես ավելի տպավորիչ ու հասանելի է, հասկանալի, գործնական: Այս տարիքի երեխան ծիսական բնական, անկաշկանդ, ազատ միջավայրում կիրառում է իր գիտելիքները, հմտություն է ձեռք բերում, զարգանում է երևակայությունը, կարողանում է ազատ արտահայտել իր միտքը: Կարողանում է կողմնորոշվել և կատարել համապատասխան գործողություններ՝

բանավոր խոսքի միջոցով հիմնավորելով, ներկայացնելով իր երևակայությամբ ստեղծած միտքը:

Տոներին, զվարճանքներին ու ծեսերին պետք է մասնակցեն բոլորը: Երեխան անչափ ոգևորվում է, երբ իր կողքին տեսնում է երգող մեծահասակներին և ընկերներին: Երկարատև վարժանքների և փորձերի կարիք չկա: Կարևոր է, որ երեխաները պարզապես միասին նշեն, հաճույք ստանան, պատմեն միմյանց, թե ինչպես են այդ տոները նշում իրենց ընտանիքներում: Այդպիսով նրանք տնից ուսումնական հաստատություն և ուսումնական հաստատությունից տուն են փոխանցում տոնը/ծեսը: Երեխան դառնում է ոչ միայն տեղեկատվություն սպառող, այլ նաև տեղեկատվության աղբյուր:

Եզրակացություն

Այսպիսով, մանկապարտեզում երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որոնք իրենց հերթին ևս նպաստում են ժողովրդական արվեստի զարգացմանը: Երեխաները սովորում են ծիսական երգեր, ասույթներ, ասիկներ, օրհնանքներ: Նկարում են տվյալ ծեսին համապատասխան նկարներ: Եվ այս ամենը անմիջականորեն կապված է ժողովրդական արվեստի և նրա ճյուղերի հետ:

Ազգի կյանքի հաստատուն ընթացքը, նրա հոգեւոր հարստությունը մեծապես կախված է նրա տոների հարստությունից ու բազմազանությունից: Ազգը մոռացա՞վ իր տոները, մեծապես կնպաստի իր չքացումին: Ազգը եթե ազգ է, տոնը ոչ փոխառնում է եւ ոչ էլ արտահանում, այլ սրբորեն պահում է իրենը՝ ազգայինը: Ժողովուրդն է ուրիշից տոն փոխառնում, կամ էլ ուրիշին իրենը պարտադրում:

Հայ ազգային տոները արիական ցեղային տոների մասնավոր արտահայտություններից են: Բայց այնպիսի արտահայտություններից, որոն-ցում առավել ամբողջականորեն են պահպանվել արիական ընդհանուր ցեղային տոների բովանդակությունն ու իմաստը (չէ՞ որ հայ ազգային տոների կրողը շարունակում է ապրել ցեղի բնօրրանում ու ապրելով շարունակում է պահպանել նրա ավանդույթները): Ինչպիսին ազգն է, ինչ ծագումնաբանական որակ որ ունի նա, այնպիսին էլ նրա տոներն են: Պարզ է, որ հայն իր տոներում ի վերուստ իրեն տրված արարչական ու աստվածային այդ բոլոր որակներն արտահայտում է ու ամեն անգամ այդ տոները տոնելիս՝ դրանք իրենում նորո-գում-թարմացնում (հիմնովին ու լրիվորեն ազգային կյանքով ապրելու ժամանակներում՝ ըստ ամենայնի, իսկ հետագայում ու մեր ժամա-նակներում, պարզ է, մասնակիորեն):

Բոլոր ժողովրդական տոներն ուղեկցվել են երգ-երաժշտությամբ, արտասանություններով, որոնք մշակել ու ժողովրդին են ներկայացրել բանաստեղծները, կոմպոզիտորները, գեղանկարիչները և ուրիշներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մկրտչյան Սամվել, Տոներ: Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն).- Եր.: «Գասպրինտ» հրատ., 2010. - 192 էջ:
2. Միտոյան Հ., Մարության Ս., Սմբատյան Լ. և ուրիշներ, Մանկապարտեզի կրտսեր առաջին խմբի կրթական համալիր ծրագիր, Երևան, 2012թ.:
3. 3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մոդելներով, դաստիարակի ուղեցույց, Երևան 2018, 196 էջ:

Ինտերնետային պաշարներ

4. https://marinemkrtchyan.wordpress.com/ հասանելի առ. 20.11.2023 16:25
   https://tevanyanseda.home.blog/ հասանելի առ. 21.11.2023 17:10
5. https://syuzisakvanyan.files.wordpress.com հասանելի առ. 21.11.2023 18:10
6. https://sahakyanshoxik.wordpress.com/ հասանելի առ. 18.11.2023 14:20
7. https://tert.nla.am/archive/HAY%20GIRQ/Ardy/2001-2011/mkrtchyan_toner_2010.pdf հասանելի առ. 05. 11.2023 15:05
8. https://larisamkrtchyan.wordpress.com/ հասանելի առ. 05.11.2023 14:09
9. https://tevanyanseda.home.blog/ հասանելի առ. 07.11.2023 17:50
10. https://naxakrtaran1.wordpress.com/ հասանելի առ. 14.11.2023 15:10
11. https://www.youtube.com/watch?v=Nr_VMN5RfOE հասանելի առ. 09.11.2023 17:10